



Այս համարում՝

ՍԱՐԴՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը ներկայացնում է 2009թ. տարեկան հաշվետվությունը
- Հիմնադրամը կարևորում է երիտասարդների ներգրավումը
- Երկխոսություն թեկնածուների ու ընտրազանգվածի միջև Գորիսի քաղաքապետի ընտրություններում
- «MySociety» ծրագրի հիմնադիրը ներկայացնում է mySociety-ն Երևանում
- «Huridocs»-ի ներկայացուցիչները Հայաստանում
- Լուսանկարների ցուցահանդես. կյանքը տնակներում երկրաշարժից 22 տարի անց

ՍԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

- Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացնում է եռամսյակային զեկույցը ու նոր կայք-էջը
- Գործընկերությունը քննադատում է հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի փոփոխությունները և Հանրային խորհրդի «Ինքնակարգավորման» նախաձեռնությունը

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

- Ձևավորվել է աշխատանքային խումբ՝ պալիատիվ բուժօգնության բարելավման հայեցակարգի ու գործողությունների պլանի մշակման նպատակով
- ՄՀՀ գործունեության մոնիթորինգի արդյունքները ներկայացվեցին ՄՀՀ անդամներին
- «Այժմ՝ ավելի, քան երբևէ» հռչակագիրը հասանելի է նաև հայերեն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

- Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգեր. Ուղեցույցի ներկայացում
- Հանրահայտ Ն. Մայրֆելը վերապատրաստում է Հայաստանում հատուկ կրթություն իրականացնողներին
- Գյումրիի դպրոցը ճանաչվել է ամենաակտիվը Եվրոպայի մասին գիտելիքները քննող մրցույթում

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

- Դպրոցի ավտորուսը կապահովի կապ դպրոցի ու համայնքների միջև
- Ամսալայի տարածաշրջանի 100 երեխա ձեռք կրերի միջին մասնագիտական հմտություններ
- Ճաշարանները կերակրում են 3000 տարեց անձանց Հայաստանի ուր մարզերում
- «Ձանգակատունը» սիրված լինելու զգացում է ներշնչում երեխաներին

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ

Դպրոցի ավտորուսը կապահովի կապ դպրոցի ու համայնքների միջև

Հակաճգնաժամային հիմնադրամը 20,000 ԱՄՆ դոլար է հատկացրել Արմավիրի թիվ 1 հատուկ դպրոցին, որը սպասարկում է երեխաների մարզի 29 համայնքներից: Երեխաները փոխադրամիջոցի բացակայության պատճառով չէին կարողանում հաճախել դպրոց: Այժմ դպրոցի ավտորուսը հնարավորություն կտա, որ դպրոցի ու համայնքների միջև լինի կանոնավոր երթուղի և ևս 30-40 երեխա, որոնք զրկված էին կրթություն ստանալու իրենց իրավունքից համեմատաբար մեկուսացված համայնքներում բնակվելու կամ փոխադրամիջոց չլինելու պատճառով, կկարողանա հաճախել դպրոց: Դպրոցում արդեն իսկ սովորում են հատուկ կարիքներով 85 երեխա:

Ուսուցիչները նախկինում իրենց աշխատավարձից միջոցներ են տրամադրել երեխաների փոխադրումը տնից դպրոց և դպրոցից տուն կազմակերպելու համար: Սակայն սա կենսունակ լուծում չէր երեխաների փոխադրումն իրականացնելու համար, հատկապես եթե հաշվի առնենք, որ ճգնաժամից անմասն չեն մնացել նաև ուսուցիչներն ու նրանց ընտանիքները: Հիմնադրամի այս ծրագիրը, որ դպրոցին ապահովեց սեփական փոխադրամիջոցով, փրկություն էր դպրոցի և համայնքի համար: Ծրագրով նաև նախատեսվում է հիմնել խեցեգործական արհեստանոց, որը երեխաներին կծանոթացնի խեցեգործության արվեստին՝ ստեղծելով ստեղծագործ միջավայր երեխաների միջև շփումների համար: ▶ տես էջ 7

ՍԱՐԴՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանության ձեռքակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը ներկայացնում է 2009թ. տարեկան հաշվետվությունը

Ս.թ. հունիսի 23-ին Ոստիկանության ձեռքակալված անձանց պահման վայրերում (ԶՊՎ) վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբը Կոնգրես հյուրանոցում ներկայացրեց 2009թ. տարեկան հաշվետվությունը: Միջոցառմանը մասնակցում էին ազգային և միջազգային կազմակերպությունների, ոստիկանության և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Քննարկման ընթացքում բարձրացվեցին և քննության առնվեցին մի շարք կարևոր հարցեր, մասնավորապես ԶՊՎ-ների պայմանների (առողջական վիճակի գնումներ, դեղամիջոցների առկայություն ԶՊՎ-ներում), տեղեկատվության հասանելիության, ոստիկանության գործողությունների ու անպատժելիության վերաբերյալ: Քննարկմանը ակտիվորեն մասնակցեցին ու հնչեցրած հարցերին պատասխանեցին ՀՀ ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաները: ▶ տես էջ 2



▶ Մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են Ոստիկանությանը, 23 հունիսի, 2010թ.

### Հիմնադրամը կարևորում է երիտասարդների ներգրավումը

Հիմնադրամը /ԲՀԻ/ փորձում է գտնել երիտասարդների քաղաքացիական ակտիվության ընդլայնման նոր ուղիներ ու միջոցներ: Իր աշխատանքներում երիտասարդության ներգրավվածությունն ու մասնակցությունն ընդլայնելու համար Հիմնադրամը կամենում է օգտագործել ԲՀԻ Երիտասարդական նախաձեռնության փորձն ու ռեսուրսները: Մայիսի սկզբին Երիտասարդական նախաձեռնության ապագա հնարավոր գործընկերների հետ հանդիպումներ ունենալու նպատակով Հայաստանում էր Երիտասարդական նախաձեռնության ծրագրի ղեկավար Նոել Սելեզգին: Բացի այդ, պ-ն Սելեզգին օգնեց հստակեցնել Հիմնադրամի հնարավոր ներգրավվածության ոլորտները ծրագրում: «Բաց հասարակության հիմնադրամների համար երիտասարդությունը հանդիսանում է կարևորագույն օղակ, իսկ Հայաստանում, առավել քան որևէ այլ երկրում, դա ակնհայտ է: Ես շատ ուրախ եմ, որ Երիտասարդական նախաձեռնության ծրագիրն ու Հիմնադրամը Հայաստանում առաջիկա տարիներին աշխատելու են միասին», - ասաց նա:

Երիտասարդական նախաձեռնությունը ԲՀԻ-Նյու Յորքի ծրագիրն է և ներառում է Բանավեճի ցանցային ծրագիրը, որն օժանդակում է իրենց համայնքների հիմնահարցերի շուրջ կարևոր քննարկումներում ներգրավված երիտասարդներին, ինչպես նաև Երիտասարդական գործողությունների հիմնադրամը, որը փոքր դրամաշնորհներ է հատկացնում երիտասարդների կողմից մշակված և երիտասարդների կողմից իրականացվող ծրագրերի համար: Երիտասարդական նախաձեռնության ծրագրի մանրամասներին կարող եք ծանոթանալ [www.soros.org/initiatives/youth](http://www.soros.org/initiatives/youth) էջում:»

### Երկխոսություն թեկնածուների ու ընտրագանգվածի միջև Գորիսի քաղաքային ընտրություններում

Երբ Գորիսը պատրաստվում էր 2010 հունիսի քաղաքային ընտրություններին, Հիմնադրամի աջակցությամբ Գորիսի մամուլի ակումբն իրականացրեց ծրագիր ընտրողների և թեկնածուների միջև երկխոսություն ծավալելու նպատակով: Ծրագրի շրջանակում կազմակերպությունն անցկացրեց հարցում՝ պարզելու, թե որոնք են մարդկանց անհանգստացնող խնդիրները, որոնց լուծումներն ակնկալվում են ապագա քաղաքապետից:



▼ Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը հարցաշար լրացնելիս, 24 փետրվարի, 2010թ.

Հարցվողների 38%-ը որպես հիմնական մտահոգություն նշել էին գործազրկությունը, ապա նշվում էին երիտասարդների հիմնախնդիրները (22%) և առողջապահությունը (13.3%): Հարցման նկատմամբ հետաքրքրությունը մեծ էր, քանի որ մասնակիցները գիտեին, որ քաղաքապետի թեկնածուներն ուղղակիորեն անդրադառնալու էին բարձրացված հարցերին: «Մեզ զանգում հարցնում էին, թե երբ կլինեն թեկնածուների պատասխանները: Կարծում եմ հարցումն ինքնին մեծացրեց մարդկանց հետաքրքրությունն ընտրությունների հանդեպ», - ասում է ծրագրի համակարգող Լենա Հովսեփյանը: Ընտրական թեմաներով կազմակերպվեցին հեռուստաբանավեճեր ընտրություններից առաջ և հետո: Գորիսի մամուլի ակումբը, նպատակ ունենալով բարձրացնել տեղական պաշտոնյաների հաշվետվողականությունը բնակչության առաջ, նախատեսում է մոնիթորինգ անցկացնել՝ հետևելու, թե որքանով կյանքի կկոչվեն ընտրված քաղաքապետի կողմից տրված խոստումներն ամենակարևոր խնդիրների շուրջ: •

### «MySociety» ծրագրի հիմնադիրը ներկայացնում է «mySociety»-ն Երևանում

2010թ. ապրիլին Հիմնադրամի հրավերով mySociety վեբ-ծրագրի հիմնադիրներից մեկը՝ Թոմի Բատլենը այցելեց Երևան՝ ներկայացնելու mySociety ծրագրերը, հանդիպում ունենալու Հայաստանի ՀԿ-ների հետ և քննարկելու, թե ինչպես կարող են որոշ ծրագրեր ծառայել՝ Հայաստանում քաղաքացիների ներգրավվածությունը ընդլայնելու նպատակով:

FixMyStreet (Բարեկարգիր իմ փողոցը), WhatDoTheyKnow (Ինչ գիտեն նրանք) ծրագրերը նոր տեխնոլոգիաների միջոցով քաղաքացիների ներգրավման օրինակներ են, որոնք օգուտ են բերում թե անհատներին, թե հասարակությանը, և հաջողությամբ իրականացվել են աշխարհի շատ երկրներում: ԲՀԻ տեղեկատվական ծրագիրը՝ mySociety-ի հետ համատեղ մեկնարկել է մի ծրագիր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, որի նպատակն է օգնել անհատներին ու կազմակերպություններին ինտերնետի գործածման միջոցով բարելավել քաղաքացիությունն ու հաշվետվողականությունը իրենց երկրներում:



▲ Հեռուստատեսային քոք-շոու «Լաստ» հեռուստաընկերության եթերում, 13 մարտի, 2010թ.

«MySociety» ՀԿ-ն գտնվում է Մեծ Բրիտանիայում, և այն-տեղ կազմակերպության մասին խոսելիս այն անվանում են քաղաքացիների առցանց ժողովրդավարություն, որը նպատակ ունի կերտել «սոցիալական ուղղվածության գործիքներ, որոնք կներգործեն ցանցից դուրս»: Հիմնադրամի Տեղեկատվական ծրագիրը մտադիր է համագործակցել «mySociety»-ի հետ՝ Հայաստանում mySociety-ի հենքի վրա մի շարք ծրագրային գաղափարներ իրագործելու նպատակով: •

**«Huridocs»-ի ներկայացուցիչները Հայաստանում**

2010թ. մայիսին Երևան ժամանեցին «Huridocs» շվեյցարական ՀԿ-ի փորձագետները՝ հանդիպելու տեղի մի շարք ՀԿ-ների հետ և տեղում ծանոթանալու հայկական ՀԿ-ներում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ամենօրյա գործածման, տվյալների հավաքագրման ու մշակման մեթոդներին:

Հիմնադրամի տեղեկատվական ծրագիրը Ցանցային տեղեկատվական ծրագրի հետ համատեղ պլանավորում է մեկնարկել մի ծրագիր «Huridocs»-ի հետ, որի շրջանակում կմշակվեն տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների անհրաժեշտ գործիքներ, որոնց միջոցով տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները կդառնան ՀԿ-ների աշխատանքի անբաժանելի մաս և մեծապես կբարելավեն մարդու իրավունքների շուրջ տվյալների հավաքագրման, մշակման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքները:

«Huridocs»-ը, որի ամբողջական անվանումը թարգմանաբար կլինի Մարդու իրավունքների տեղեկատվության և փաստաթղթավորման համակարգեր, հիմնադրվել է 1982թ. և հանդիսանում է մարդու իրավունքների հարցերով մտահոգ կազմակերպությունների համաշխարհային ցանց: •

**Լուսանկարների ցուցահանդես. կյանքը տնակներում երկրաշարժից 22 տարի անց**

Ապրիլի 14-ին «Երրորդ բնություն» ՀԿ-ն Երևանի Սիրահարների այգում ներկայացրեց Անուշ Բաբաջանյանի լուսանկարների ցուցահանդեսը՝ «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի իրավունք» խորագրի ներքո: Հիմնադրամն օժանդակել է թե լուսանկարչին, թե ցուցահանդեսի կազմակերպմանը: Ցուցահանդեսում ներկայացվում էին այն պայմանները, որոնցում ապրում են Գյումրու խարխլված տնակների բնակիչները՝ երկրաշարժից 22 տարի անց:



▲ Լուսանկարների ցուցահանդես Սիրահարների այգում, 14 ապրիլի, 2010թ.

Այս լուսանկարների միջոցով ծրագիրը նպատակ ուներ բարձրաձայնել հազարավոր մարդկանց խոսքը և իշխանությունների ու այլ շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրել 22 տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժի հետևանքների հետ դեռ մաքառող մարդկանց խնդիրներին: Ցուցահանդես այցելեցին բազմաթիվ մարդիկ, այդ թվում ազգային և միջազգային կազմակերպությունների և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ: Լուսանկարները կարող եք տեսնել՝ <http://anushbabajanyan.com/2010/03/19/living-in-gyumri-domiks/> կամ <http://anushbabajanyan.com/2010/03/22/photoalbum/> էջերում: •

**ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ**

**Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացնում է եռամսյակային զեկույց ու նոր կայք-էջը**

Ապրիլի 8-ին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացրեց 2010թ. առաջին եռամսյակային զեկույցը երկրում ՁԼՄ-ների իրավիճակի, լրագրողների դեմ բռնության դեպքերի և լրագրողական իրավունքների խախտումներ վերաբերյալ: «2009թ. տեղ գտած բացասական միտումները շարունակվել են նաև 2010թ.», - ասաց կազմակերպության ղեկավար Աշոտ Մելիքյանը, - «2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են լրագրողների հանդեպ ֆիզիկական բռնության դեպքերը, ինչը մենք վերագրում ենք հունվարի 10-ին 10-րդ ընտրատարածքում տեղի ունեցած ընտրություններին»: Երկրորդ եռամսյակային զեկույցը 2010թ. ապրիլ-հունիս ամիսների վերաբերյալ կազմակերպությունը կներկայացնի հուլիսի 18-ին:

Կազմակերպությունը նաև ներկայացրեց իր նոր կայք-էջը՝ [www.khosq.am](http://www.khosq.am): Կայքում զետեղված են տեղեկություններ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի

գործունեության մասին, կազմակերպության զեկույցները և վերլուծական նյութերը: Այն նաև հնարավորություն է ընձեռում լրատվական կազմակերպություններին ու լրագրողներին ուղղակի խորհրդատվություն ստանալ կազմակերպության իրավաբանից:

Մոնիթորինգի իրականացումը, զեկույցների հրապարակումը և կայք-էջի ստեղծումը իրագործվել է Հիմնադրամի և Նիդեռլանդների կառավարության օժանդակությամբ իրականացվող առավել ընդգրկուն ծրագրի շրջանակում:•



▲ Աշոտ Մելիքյանը, Օլգա Մաֆարյանը Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեից և Մեսրոպ Մովսիսյանը Մելտեքս ՄՊԸ-ից Գործընկերության քննարկման ժամանակ, 14 մայիսի, 2010թ.

## **Գործընկերությունը քննադատում է հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի փոփոխությունները և Հանրային խորհրդի «ինքնակարգավորման» նախաձեռնությունը**

Հունիսի 10-ին Ազգային ժողովն ընդունեց Հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքը՝ չնայած այն արժանացել էր ազգային ՁԼՄ-ների մասնագիտական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների սուր քննադատությանը: ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը խիստ քննադատական հայտարարություն արեց նախքան այս օրենքի ընդունումը, ապա նաև օրենքի ընդունումից կարճ ժամանակ անց: Փոփոխությունների հետ կապված քննադատական հայտարարություններով հանդես եկան նաև Եվրոպական հանձնաժողովն ու ԵԱՀԿ-ում ԱՄՆ պատվիրակությունը:

Մայիսի 14-ին Հիմնադրամն իր ՁԼՄ գործընկերների հետ նախաձեռնեց մամուլին առնչվող օրենսդրության ու ինքնակարգավորման նախաձեռնության քննարկում, որպեսզի քննության առնվեն Հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենքի փոփոխությունները և հանրային խորհրդի կողմից առաջ քաշված մամուլի ինքնակարգավորման նախաձեռնությունը: Հեռուստատեսության ու ռադիոյի մասին նոր օրենքը ներկայացվեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից կապված անարդյալի հեռարձակումից թվային հեռարձակման անցնելու հետ, որը պետք է ավարտվի մինչև 2015թ.: Օրենքի նախագիծը Ազգային ժողովի օրակարգ մտցվեց առանց հանրային լսումների ու առանց խորհրդարանի համապատասխան հանձնաժողովում քննարկվելու:

Քանի որ հանրային լսումներ չէին եղել ու քաղաքացիական հասարակությունը, այդ թվում ՁԼՄ ոլորտի մասնագիտական կազմակերպությունները ներառված չէին գործընթացում, Գործընկերությունն անմիջապես ձեռնամուխ եղավ օրենքի նախագծի քննարկման անցկացմանը, որպեսզի անդրադարձ կատարվի խնդրահարույց դրույթներին: Հրավիրվեցին պետական պաշտոնյաներ, միջազգային, ազգային կազմակերպությունների, ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

Ըստ ոլորտի պրոֆեսիոնալների՝ օրենքի այս նախագիծն ավելացնում է գործող օրենքի թերությունները, որոնք կարող են միայն ծառայել հեռարձակողների նկատմամբ պետական վերահսկողության ամրապնդմանը: Մասնագետների գնահատմամբ օրենքի նախագծում տեղ էին գտել դրույթներ, որոնք անհամադրելի են խոսքի ազատության,

շուկայական տնտեսության ու ժողովրդավարական այլ սկզբունքների հետ: Ցավոք, Էկոնոմիկայի նախարարության տեխնիկական հարցերով ներկայացուցիչը չկարողացավ պարզաբանումներ տալ թվայնացման տարբեր կողմերի վերաբերյալ և օրինագծի մյուս հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ չարեց: Նախագիծը մշակված թիմի ներկայացուցիչը, ով նախապես ընդունել էր մասնակցության հրավերը, քննարկմանը ներկա չէր:

Այս միջոցառումից հետո Երևանի մամուլի ակումբը, Ինտերնյուս-Հայաստան ՀԿ-ի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի ու «Ասպարեզ» լրագրողական ակումբի հետ համատեղ հանդես եկան հայտարարությամբ՝ անդրադարձ կատարելով օրենքի խնդրահարույց դրույթներին ու այն մշակելու ոչ-թափանցիկ ու ոչ-մասնակցային գործընթացին: Հայտարարության տեքստը կարող եք գտնել [www.partnership.am/Statements](http://www.partnership.am/Statements) էջում:

Քննարկման մասնակիցներն անդրադարձան նաև Հանրային խորհրդի «ինքնակարգավորման» նախաձեռնությանը, որին միացել էին 11 հեռուստաընկերություն: Կարելի է հեզմանք համարել, որ մամուլի կազմակերպությունների ինքնակարգավորման իրական նախաձեռնությանն այդ հեռուստաընկերություններից ոչ մեկը չմիացավ: Մամուլի ոլորտի մասնագետները քննադատեցին Հանրային խորհրդին իր իրավասության շրջանակից ու մանդատից դուրս գործունեություն իրականացնելու համար: «Մամուլի ինքնակարգավորումը լրագրողական համայնքի գործունեության տիրույթն է, և լրագրողներն իրենք պետք է նախաձեռնեն ու իրականացնեն այն: Ակնհայտորեն, սա մեկ այլ փորձ է մամուլը պետական վերահսկողության տակ պահելու համար», - ասաց Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը: Մամուլի ոլորտի բոլոր կազմակերպությունները քննադատաբար են արտահայտվել Հանրային խորհրդի այս վերջին նախաձեռնության շուրջ: •



▲ Լևոն Բարսեղյանը «Ասպարեզ» լրագրողական ակումբից ու Հովհաննիսյանը Հանրային խորհրդից Գործընկերության քննարկման ժամանակ, 14 մայիսի, 2010թ.

## **ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

### **Ձևավորվել է աշխատանքային խումբ պալիատիվ (ամոքիչ) բուժօգնության բարելավման հայեցակարգի ու գործողությունների պլանի մշակման նպատակով**

Հիմնադրամը տեխնիկական օժանդակություն է ցուցաբերել Առողջապահության նախարարությանը ձևավորվելու աշխատանքային խումբ, որը կգրառվի պալիատիվ (ամո-

քիչ) բուժօգնության հայեցակարգի ու գործողությունների պլանի մշակմամբ՝ նպատակ ունենալով զարգացնել այդ ճյուղը Հայաստանում: Հայեցակարգը կդիտարկվի, թե ինչպես կարելի է հասնել որակի չափելի բարելավումների պալիատիվ բուժօգնության մասնագետների, բուժքույրերի, հոսփիսների, ինտենսիվ բուժօգնության բաժանմունքների և այլ առողջապահական ծառայությունների կողմից ցուցաբերվող պալիատիվ բուժօգնության ասպարեզում:

Փաստաթուղթը անդրադարձ կկատարի ստանդարտների մշակման և լիցենզավորման հարցերին, որով պալիատիվ բուժօգնությունը տեղ կգտնի Հայաստանում ընդունված մասնագիտությունների շարքում:

«Պալիատիվ բուժօգնության ինտեգրումը Հայաստանում կօգնի հաղթահարել հիմնական խոչընդոտները կյանքի վերջում որակյալ բուժօգնության ապահովելու ճանապարհին», - ասաց ՀՀ առողջապահության նախարարի իրավախորհրդատու Սուրեն Բրնոյանը՝ շեշտելով պալիատիվ բուժօգնության կարևորությունը:

Պալիատիվ բուժօգնությունը խորացող հիվանդություններով պացիենտների ամբողջական խնամքն է: Ցավի և այլ ախտանշանների կառավարումը, հոգեբանական, սոցիալական ու հոգևոր աջակցությունը հույժ կարևոր են կյանքին վտանգ սպառնացող հիվանդություններով տառապող անձանց ու նրանց ընտանիքի անդամների կյանքի որակը բարելավելու համար: •



▲ Պալիատիվ բուժօգնության հարցերով աշխատանքային խմբի հանդիպում Առողջապահության նախարարությունում

### ՄՀՀ գործունեության մոնիթորինգի արդյունքները ներկայացվեցին ՄՀՀ անդամներին

Հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, պալարախտի և մալարիայի հարցերով Միջոցառումները համակարգող հանձնաժողովում (այսուհետև որպես ՄՀՀ) քաղաքացիական հասարակության մասնակցության շուրջ մոնիթորինգի արդյունքները, որն իրականացվել էր ՎԻՍՏԱ Վորձագիտական կենտրոնի կողմից, ներկայացվեցին ՄՀՀ անդամներին: Մոնիթորինգն ու դրա քննարկումը ֆինանսավորվել էին Հիմնադրամի կողմից:

Մոնիթորինգի նպատակն էր քննության առնել, թե ինչպես է ՄՀՀ իրականացնում իր պարտականությունները, ընդգծել այն մարտահրավերներն ու սահմանափակումները, որոնք խոչընդոտում են քաղաքացիական հասարակության առավել ընդգրկում մասնակցությանը ՄՀՀ-ում և տալ առաջարկներ ՄՀՀ-ում քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցություն ապահովելու հարցում լուծումներ մշակելու ուղղությամբ:

Շահագրգիռ կողմերի մեծ մասը հիմնականում համաձայն են առաջարկների որոշ մասի հետ, որոնք հիմնականում վերաբերում են ՄՀՀ ներկա կառուցվածքի արդյունավետությանը, շահերի բախման քաղաքականությանը, ՄՀՀ գործունեության թափանցիկությանը, ինչպես նաև ՄՀՀ ընտրական գործընթացների և թափանցիկության հսկողության հարցում ՀՎ-ների դերին:

«Մոնիթորինգի արդյունքում տրված առաջարկներից մի քանիսը կնպաստեն ՄՀՀ-ում քաղաքացիական հասարակության մասնակցությանը, հատկապես առողջապահական ծառայությունների ապահովման բարելավման և հսկման գործընթացներում», - ասաց Լիլիթ Հովհաննիսյանը ՎԻՍՏԱ Վորձագիտական կենտրոնից:


ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման Միջոցառումները համակարգող հանձնաժողովը Հայաստանում հիմնադրվել է 2002թ: Մինչ դեռ հիմնադրման պահին իր իրավասության շրջանակները ներառում էին ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ոլորտում սահմանել առաջնահերթությունների ռազմավարությունները և շարունակաբար հսկել Գլոբալ հիմնադրամի ռեսուրսների հատկացումները, 2005թ. այն ընդլայնեց իր իրավասությունները՝ ներառելու նաև պալարախտի և մալարիայի հետ կապված խնդիրներ: Այժմ այն Հայաստանի Հանրապետությունում իր գործունեությունն է ծավալում որպես ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, մալարիայի և պալարախտի հարցերով ՄՀՀ: •

### «Այժմ՝ ավելի, քան երբևէ» հռչակագիրը հասանելի է նաև հայերեն

«Այժմ՝ ավելի, քան երբևէ» հռչակագիրը, որը մշակվել և լույս է ընծայվել Բաց հասարակության ինստիտուտի և հավանության արժանացել աշխարհի 24 հասարակական կազմակերպությունների ցանցային կառույցների կողմից, այժմ հասանելի է նաև հայերեն լեզվով: Հռչակագրի թարգմանված տարբերակը կարելի է գտնել հիմնադրամի Իրավունքի և առողջապահության նախաձեռնության [www.healthrights.am](http://www.healthrights.am) էջում:

«Հռչակագիրը հոյակապ ռեսուրս է ՉԻԱՀ-ով ապրող անձանց համար և կօգնի նրանց ծանրութեթև անել իրենց խնդիրները ոչ միայն առողջական, այլ նաև մարդու իրավունքների տեսակետից», - ասաց մարդու իրավունքների ակտիվ պաշտպան Արթուր Սաքունցը, որը հանդիսանում է ներերակային թմրամիջոց գործածողների համար իրավական օգնություն տրամադրող Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տնօրենը:

Հռչակագիրը վեր է հանում 10 պատճառ, ըստ որի այժմ՝ ավելի, քան երբևէ մարդու իրավունքները պետք է հանդիսանան ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի դեմ համաշխարհային պայքարի հիմնաքարը: •



▲ Լույս է տեսել «Այժմ՝ ավելի, քան երբևէ» հռչակագիրը հայերեն լեզվով

**Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգեր. ուղեցույցի ներկայացում**

Երևանի պետական համալսարանն ու Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը 2010թ. ապրիլի 6-ին ներկայացրեցին բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերի վերաբերյալ ուղեցույցը Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնում: Ուղեցույցը մշակվել էր «Որակի ապահովման ներքին համակարգի շրջանակային մոդել միջբուհական կոնսորցիումի օրինակով» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել էր Հիմնադրամի կողմից և իրականացվել չորս համալսարանների՝ Երևանի Պետական համալսարանի, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի և Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի կողմից:

Ծրագրի իրականացումը չորս համալսարաններին հնարավորություն տվեց կատարել իրավիճակի ինքնագնահատում կապված ներքին որակի հետ և մատնանշել այն նշանակությունը, որոնք կերաշխավորեն որակի ապահովման ներքին մոդելների և մեխանիզմների համապատասխանությունը եվրոպական ստանդարտներին: Ծրագրի իրականացման ընթացքում չորս համալսարաններից երկուսը՝ Երևանի պետական համալսարանն ու Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը միավորեցին իրենց ջանքերը՝ մշակելու ուղեցույց որակի ապահովման վերաբերյալ:



▲ **ԲՀԻ գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանը ողջունում է մասնակիցներին ՈԱ ուղեցույցի ներկայացման միջոցառմանը, 6 ապրիլ, 2010թ.**

Ուղեցույցը հավանության է արժանացել Հայաստանի ազգային որակի ապահովման գործակալության կողմից որպես ռեսուրս Հայաստանի բարձրագույն կրթության հաստատությունների համար՝ իրականացնելու որակի ներքին ապահովման մեխանիզմներ ըստ Եվրոպական բարձրագույն ուս. հաստատությունների որակի ապահովման ասոցիացիայի ստանդարտների: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի պետական և մասնավոր բուհերի մեծ մասի ներկայացուցիչներ, Կրթության և գիտության նախարարության, Հայաստանի Ազգային որակի ապահովման գործակալության, Կրթության ազգային ինստիտուտի, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների, հաստատությունների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել <http://www.osi.am/links.asp> էջում: •

**Հանրահայտ Ն. Մալոֆենը վերապատրաստում է Հայաստանում հատուկ կրթություն իրականացնողներին**

Երևանի բժշկա-մանկավարժա-հոգեբանական կենտրոնը (նախկին No 5 հատուկ դպրոց), որը գնահատման և մեթոդաբանական ծառայություններ է տրամադրում հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներին, Ռուսաստանից հրավիրել էր հանրահայտ մասնագետ Նիկոլայ Մալոֆենին՝ կատարելագործելու կրթության հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետների գիտելիքներն ու հմտությունները: Պարոն Մալոֆենը հանդիսանում է բազմաթիվ գրքերի հեղինակ, որոնցից են «Հատուկ կրթությունը Ռուսաստանում», «Որակյալ կրթություն բոլորի համար» և այլն: Հնգօրյա վերապատրաստման ընթացքում նա երեսուն հայ մասնագետի տարբեր հաստատություններից վերապատրաստել է հատուկ և ներառական կրթության վերաբերյալ նոր մոտեցումների շուրջ: Այս 30 մասնագետները, որոնք հիմնականում բաղկացած էին խոսքի, լսողության և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետներից, այնուհետև կվերապատրաստեն ներառական դպրոցների ուսուցիչներին և հոգեբաններին՝ երեխաներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով:

Հիմնադրամը հինգ տարի շարունակ ֆինանսավորել է երեք հատուկ դպրոցի, ներառյալ վերոհիշյալ կենտրոնին՝ բարելավելու կրթության հատուկ կարիքներ ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունները: Այս տարիների ընթացքում մասնակից դպրոցները հիմնել են խաղաարահներ, մշակել մեթոդաբանական նյութեր, վերապատրաստել ուսանողների, ծնողների և ներառական դպրոցների ուսուցիչների՝ ապահովելու էլ ավելի լավ ծառայություններ այս դպրոցներում ընդգրկված հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար: •



▲ **Ն. Մալոֆենը վերապատրաստում է հատուկ կրթություն իրականացնողներին, ապրիլ, 2010թ.**

## Գյումրիի դպրոցը ճանաչվել է ամենաակտիվը Եվրոպայի մասին գիտելիքները քննող մրցույթի ընթացքում

Գյումրիի դպրոցներից մեկը ապրիլի 28-ին Հիմնադրամի օժանդակությամբ ստեղծված Եվրոպական ակումբների ցանցային ծրագրի շրջանակներում կազմակերպված մրցույթում առաջին տեղի մրցանակ ստացավ Եվրամիության մասին ունեցած տեսական գիտելիքների ասպարեզում: Բոլոր այն դպրոցները, որտեղ եվրոպական ակումբներ են գործում 2007թ. ի վեր մասնակցեցին մրցույթին: Սա առաջին մրցույթն էր դպրոցների միջև՝ ստուգելու նրանց գիտելիքներն ու ստեղծագործ միտքը: Միջոցառումը շատ օգտակար էր ներգրավված դպրոցների համար, քանի որ նրանք կարողացան համեմատել իրենց մյուս դպրոցների սաների հետ և խորհել կյանքի իրական իրավիճակների մասին:



▲ Երեխաները ունկնդրում են հասակակիցների ներկայացումները Եվրոպական ակումբների մրցույթի ժամանակ, 28 ապրիլի, 2010թ.

Նմանատիպ վիկտորինաներ նախատեսվում են նաև ապագայում:

Հիմնադրամը 2007թ. ի վեր օժանդակել է ութ միջնակարգ դպրոցի՝ ստեղծելու Եվրոպական ակումբներ դպրոցներում: Նախաձեռնության նպատակն է եղել իրագրել պատանի աշակերտներին, ծնողներին և համայնքի անդամներին Եվրոպական գաղափարների և արժեքների շուրջ, կրթել նրանց հանդուրժողականության, հավասարության, մարդու իրավունքների մասին և խթանել քաղաքացիական ակտիվությունը: •



▲ Մրցույթ Եվրոպական ակումբների միջև, 28 ապրիլի, 2010թ.

## ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

### Ամասյայի տարածաշրջանի 100 երեխա ձեռք կրերի միջին մասնագիտական հմտություններ

Հուլիսի կամար ՀԿ-ն ճգնաժամային հիմնադրամից հատկացված 24,670 ԱՄՆ դոլար գումարով Ամասյայի տարածաշրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 12-18 տարեկան 100 տղաների և աղջիկների կուսուցանի միջին մասնագիտական հմտություններ հետևյալ երեք բնագավառում. կար ու ձև, խոհարարություն և գրքակազմություն: 30-40 երեխայի կուսուցանվի հիմնական համակարգչային և համացանցից օգտվելու գիտելիքներ:

Ֆինանսավորումը կօգնի համալրել համայնքային կազմակերպությունները, ինչպես օրինակ գրադարանը, ուսուցման կենտրոնը սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով: Տեղի գրադարանում նաև կբացվի գրքակազմության արհեստանոց, որը նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն կընձեռնի:

Ծրագիրը նախատեսում է հիմնել շարունակական համագործակցություն համայնքային կազմակերպությունների և տեղի բիզնեսների միջև՝ վեր հանելու աշխատաշուկայի կարիքները և պատրաստելու համապատասխան մասնագետներ:

### Ճաշարանները կերակրում են 3000 տարեց անձանց Հայաստանի ութ մարզերում

Առաքելություն Հայաստան ՀԿ-ն, որը հանդիսանում է Հայաստանում սոցիալական ծառայություններ մատուցող հիմնական կազմակերպություններից մեկը, ստացել է 199,000 ԱՄՆ դոլար որպես համաֆինանսավորում երկրով մեկ իրականացվող ծրագրի համար, որը հնարավորություն կտա շաբաթական հինգ օր տաք ճաշով ապահովել



▲ Տաք քննարկմամբ համեմված տաք ճաշ Շենգավիթի ճաշարանում

3000 շահառուի համար (432,960 ԱՄՆ դոլար ստացվել էր ԱՄՆ ՄՁԳ և ՀՀ սոցապ նախարարության կողմից): Ծրագիրն իրականացվում է Առաքելություն Հայաստան ՀԿ-ի՝ 8 մարզերի 20 քաղաքներում գործող 25 կենտրոնների միջոցով:

Ծրագիրը նաև սոցիալական և առողջապահական ծառայություններ է մատուցում շահառուների՝ հետզհետե անող քանակի համար. վերջիններիս քանակը ծրագրի վերջում կհասնի 6000-ի :

Մրանից բացի, դրամաշնորհը հնարավորություն կընձեռի շարունակել 21 ճաշարանների գործունեությունը, որոնք փակման վտանգի տակ էին: Ծաշարանները հոյակապ հնարավորություն են հանդիսանում տարեցների համար շփվելու տեսանկյունից, ներառյալ ստեպ-ստեպ ծննդյան տոների նշումը ընկերների շրջանում: •



▲ Տաք ճաշի մատուցում Վանաձորի ճաշարանում, Լոռու մարզ, 2010

## «Ձանգակատուն»-ը սիրված լինելու զգացում է ներշնչում երեխաներին

Թուֆենկյան հիմնադրամի «Ձանգակատուն» ծրագիրը ճգնաժամային հիմնադրամից ստացված համաֆինանսավորմամբ շարունակում է համապարփակ վերականգնողական ծառայություններ մատուցել աղքատ, մարզինալացված և այլ խոցելի ընտանիքներին իր Երևանի և Վանաձորի կենտրոնների միջոցով: Յուրաքանչյուր «Ձանգակատուն» կենտրոն տաք սնունդ է առաջարկում 50 երեխայի Երևանում և 75 երեխայի Վանաձորում: Այս երեխաներից շատերի համար սա միակ լիարժեք կերակուրն է, որ նրանք ստանում են օրվա ընթացքում: Ծաշերի ապահովմանը զուգահեռ «Ձանգակատուն»-ը նաև նշում է զանազան տոներ և երեխաների ծննդյան արարողությունները: Կարևոր տոների համատեղ նշումը երեխաների մոտ ընտանիքի և սիրված լինելու զգացում է սերմանում: Սոցիալական աշխատողներն օգնում են կերակրել երեխաներին և կերակուր են տանում տուն, եթե որևէ մեկը հիվանդ է կամ ի վիճակի չէ այցելել:

Հիմնադրամը ֆինանսավորել է «Ձանգակատուն » ծրագիրը 2009թ. դեկտեմբերից և հատկացրել է 90,478 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման համար: Թուֆենկյան հիմնադրամի ներդրումը կազմում է 98,650 ԱՄՆ դոլար: •



▲ Ձանգակատունը տաք ճաշ է մատուցում երեխաներին, 2010թ.

